

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈւՏԴ 395.65

Ա. Հ. Օսիկյան, Ա. Խ. Մարկոսյան, Տ. Տ. Մուկուչյան, Ս. Հ. Թորմաջյան

**Փակ բաժնետերական ընկերություններում բաժնետոմսերի
օտարման մի քանի հարցերի մասին**

(Ներկայացված է ակադեմիկոս Վ.Ե. Խոջաբեկյանի կողմից 27/VII 2004)

Բաժնետիրական ընկերությունների՝ մի քանի հարյուրամյակ ձգվող պատմության ընթացքում ոչ միայն չի հաջողվել այդ ոլորտում հստակեցնել ինքնակարգավորման մեխանիզմները, այլև կորպորատիվ կառավարման հարցում շարունակում են մնալ մի շարք հակասական և վերջնականապես չհիմնավորված սկզբունքներ, որոնք չեն պաշտպանում բաժնետերերի հիմնարար իրավունքները: Դեռևս XVII դարում Բլեզ Պասկալը գրել է. «Մեծամասնության կարծիքը լավագույն էլքն է, քանի որ այն ապահովված է բավարար ուժով, որպեսզի ստիպի ենթարկվել դրան: Բայց այդ ամեննին էլ իմաստունների կարծիքը չէ» [1]: Կռելյո Պաուլոն էլ իր հերթին հարց է տալիս. «Իսկ ի՞նչ է իրականությունը», և պատասխանում՝ «դա այն է, ինչը մեծամասնության կարծիքով պետք է լինի: Եվ ամեննին կարևոր չէ, որ այն լինի լավագույնը կամ առավել տրամաբանականը, այլ պետք է հարմարեցված լինի մեծամասնության ցանկությանը» [2]: Կորպորատիվ կառավարման գաղափարը կառուցված է հենց մեծամասնության կարծիքով ձևավորված ուժի գերակայության սկզբունքների վրա, և օրենսդրության խնդիրն է՝ իրականացնել այնպիսի կարգավորում, որ այդ «ուժը» հնարավորին չափ դառնա արդար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի [3], փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերն այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն, ինչպես նաև, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության

չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են փոխանցվել երրորդ անձի: Բացի այդ, Օրենսգրքով նախատեսվում է, որ անգամ ընկերության բաժնետոմսերի գրավի և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելու դեպքում կիրառվում են 109-րդ հոդվածի 1-ին կետի կանոնները, այսինքն՝ բաժնետերերի նախապատվության իրավունքը պահպանվում է նաև այս դեպքում: Բաժնետոմսերի սեփականության իրավունքի փախանցմանն ուղղված կարևոր դրույթ է նախատեսված նաև Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ կետով, համաձայն որի, փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերն անցնում են բաժնետեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ: Փաստորեն, օրենքն այստեղ թույլ է տալիս ավելի «ազատ» մոտեցում և հնարավորություն է տալիս կանոնադրությամբ ցանկացած այլ բան գրել, օրինակ, որ բաժնետոմսը ժառանգներին չի կարող անցնել, ինչը, մեր կարծիքով, անհարիր է քաղաքացիական իրավունքի սկզբունքներին: Ընդունելով, որ բոլոր դեպքերում բաժնետիրոջ համաձայնությամբ կամ գոնե գիտությամբ է (օրինակ, երբ փոփոխության է ենթարկվում կանոնադրությունը և բաժնետերը, համաձայն չլինելով, չի կարողանում ոչինչ անել) լինում կանոնադրության մեջ նման հնարավոր նորմի գոյությունը, այդուհանդերձ, կարծում ենք, որ ճիշտ կլիներ փոփոխության ենթարկել այս նորմը՝ բաժնետոմսերի փոխանցման այդ դեպքը թողնելով իմպերատիվ գործող: Ընդ որում, քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին բաժնետոմսերի անցումը կարող է մերժվել ընկերության կողմից, և այս դեպքում կկիրառվեն 109-րդ հոդվածի 1-ին կետի կանոնները: Համաձայն Օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի, այն բաժնետիրական ընկերությունը, որի անդամները առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը, համարվում է բաց բաժնետիրական ընկերություն: Սրանով էլ հենց պայմանավորված է փակ և բաց բաժնետիրական ընկերությունների տարբերությունը, և սա էլ այն հիմնական սկզբունքն է, որն ընկած է կորպորատիվ կառավարման ինստիտուտի հիմքում՝ բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը, և այդ իրավունքի փոխանցումը: Նշվածի կապակցությամբ գտնում ենք, որ այդ հարցի վերաբերյալ օրենսդրական դրույթները պետք է լինեն առավելագույնս հստակ, նախատեսեն լրացուցիչ երաշխիքներ՝ ուղղված թե՛ բաժնետիրոջ սեփականության իրավունքի պաշտպանությանը և թե՛ մյուս բաժնետերերի՝ ընկերության վաճառվող բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքին:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում կիրառված սկզբունքներից չշեղվելու նպատակով գրեթե նույնանման դրույթներ են ամրագրված «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օենքով [4]: Միաժամանակ, Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանցից հրաժարվելու մասին որոշումները ընդունում է ընկերության ընդհանուր ժողովը, իսկ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են ընկերության Կանոնադրությամբ:

Նման սահմանափակում է նախատեսված նաև նոր թողարկվող բաժնետոմսերի նկատմամբ: Օրինակ, «Կորպորացիաների մասին» Չեխիայի օրենքի 68-րդ հոդվածի

համաձայն, նոր թողարկվող բաժնետոմսերը նախ առաջարկվում են առկա բաժնետերերին, բացառությամբ այն դեպքերի, երբ բաժնետերերի ժողովը այլ բան է որոշել [5]: Իսկ առաջարկը, համաձայն նույն հոդվածի, պետք է կատարվի ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Լատվիայի օրենքի համաձայն, եթե բաժնետերը ցանկանում է վաճառել բաժնետոմսերը այլ անձանց, ապա բաժնետոմսերը և գրավոր դիմումը պետք է ներկայացնի ընկերության խորհուրդ: Վերջինս այդ բաժնետոմսերը նախ առաջարկում է գործող բաժնետերերին և եթե մի քանի բաժնետեր է ցանկություն հայտնում ձեռք բերել դրանք, ապա նրանք առաջարկվող բաժնետոմսերը պետք է գնեն իրենց ունեցած բաժնետոմսերի համամասնությամբ: Գործող բաժնետերերի հրաժարվելու դեպքում, խորհուրդը ազատ է դրանք իր հայեցողությամբ վաճառելու: Ընդ որում, բաժնետոմսի վաճառքի գինն այս դեպքում սահմանվում է ընկերության կանոնադրությամբ նախատեսված հաշվարկման կարգով: Եթե խորհուրդը մեկամյա ժամկետում չի կարողանում իրացնել բաժնետոմսերը, բաժնետերն իրավունք է ստանում իր հայեցողությամբ վաճառելու դրանք [6]:

Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի օտարման նույնպիսի սահմանափակումներ է պարունակում նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ օրենքի 7-րդ հոդվածը [7, 8]: Նշված օրենքում, վերջին փոփոխությունների արդյունքում, ավելի է մանրամասնված բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի իրականացման կարգը: Մասնավորապես, սահմանվում է, որ յուրաքանչյուր բաժնետեր իր ունեցած բաժնետոմսերին համապատասխանող չափով բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունք ունի, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Սահմանված է նաև բաժնետերերին և ՓԲ Ընկերությանը բաժնետոմսերի վաճառքի մասին տեղեկատվության տրամադրման կարգը: Մինչև նույն ժամանակ սահմանված է, որ բաժնետերը չի կարող այլ բաժնետիրոջ զիջել բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իր իրավունքը: Փաստորեն, փակ բաժնետիրական ընկերությունը բաժնետոմսերի ձեռք բերման իր իրավունքը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ այդպիսի դրույթ սահմանված է ընկերության կանոնադրությամբ, և երբ ընկերության բաժնետերերը հրաժարվել են բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրենց իրավունքից: Սահմանված է նաև, որ բաժնետերերը և Ընկերությունը պարտավոր են վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերել, ոչ պակաս այն գնից, ինչը առաջարկվում է երրորդ անձի կողմից: Սակայն ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ ՌԴ-ի օրենսդրությամբ բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը գործում է միայն բաժնետոմսերի վաճառքի դեպքում և չի տարածվում օտարման այլ ձևերի, օրինակ, նվիրատվության դեպքերի վրա, ինչը բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը, ըստ էության, դարձնում է դեկլարատիվ նշանակության նորմ, որը շրջանցելու հստակ մեխանիզմներ պարունակում է ինքը՝ օրենքը: Ա.Դ.Օսիմովսկին [9] հարց է տալիս. «ի՞նչպես վաճառել ՓԲԸ-ի բաժնետոմսերը, երբ մյուս բաժնետերերը դեմ են», և ինքն էլ պատասխանում է՝ «շատ հասարակ. նվիրեք դրանք, կամ գրավ դրեք, Օրենքն ուղղակիորեն արգելում է միայն առքուվաճառքը, և օտարման բոլոր մյուս ձևերը Ձեզ հնարավորություն են տալիս Ձեր բաժնետոմսերը օտարել ում ուզում եք»: Ըստ էության, օրենսդրության այս բացը

լրացնելու անհրաժեշտություն է առաջացել: Կիսում ենք հեղինակի արտահայտած այն միտքը, որ այսօր, համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը առավելազույնս չի պաշտպանվում և բաժնետոմսերի վաճառքի դեպքում է միայն դառնում իրավաբանորեն կիրառելի: Քաղաքացիական օրենսդրությամբ խնդիրը լուծված է նաև բաժնետոմսերի գրավադրման դեպքում, և այս պարագայում նույնպես գործում է նախապատվության իրավունքը (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 109 հոդված, 1-ին և 2-րդ մասեր): Այլ դեպքերում օրենսդրորեն հնարավորություն է ստեղծված շրջանցել բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքի իրականացումը, օրինակ՝ նվիրատվություն կատարել կամ անհատույց օտարել: Սակայն այս դեպքում չի ապահովվում այն հիմնական սկզբունքի պաշտպանությունը, որն էլ հենց օրենքի ուժով համարվում է հիմք «բաց և փակ բաժնետիրական ընկերություններ» հասկացությունների տարբերակման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109-րդ հոդվածում, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, մեր կարծիքով, անհրաժեշտ է ամրագրել, որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերը նվիրատվություն կատարելու միջոցով կամ այլ անհատույց ձևով կարող է օտարել իր բաժնետոմսերը միայն բոլոր բաժնետերերի կողմից համաձայնություն ստանալու դեպքում: Ինչ վերաբերվում է փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի օտարման այլ եղանակներին, ապա դրանց կիրառման վրա անհրաժեշտ է օրենքով սահմանափակումներ դնել, որոնք կբացառեն բաժնետերերի՝ բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի շրջանցմամբ բաժնետոմսերի օտարման ցանկացած գործարքի կատարման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, կորպորատիվ հարաբերությունների ամբողջ համակարգը կառուցված է բաժնետոմսերի սեփականությունից ծագող իրավունքների վրա. դրանց փոխանցումը այն տնօրինող, տիրապետող և օգտագործող անձի ժառանգորդներին, ինչպես նաև իրավահաջորդին փոխանցման իրավունքը չի կարող սահմանափակվել ընկերության կանոնադրությամբ և չի կարող մերժվել ընկերության կողմից, ինչը ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 109-րդ հոդվածում [3]:

Բաժնետոմսերի կառավարումը, դրանց նկատմամբ սեփականության իրավունքը, այդ իրավունքի սահմանափակումները, ընկերության օտարվող բաժնետոմսի նկատմամբ նախապատվության իրավունքի պաշտպանությունը՝ փակ բաժնետիրական ընկերությունների գործունեության կարևոր նախապայմաններից են և գործող օրենսդրության «բացերը» ոչ թե ապահովում են դրանց կիրառումը, այլ պայմաններ են ստեղծում դրանք չկիրառելու և այդ սկզբունքները շրջանցելու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ. մասնավորապես, ընկերության բաժնետոմսերի ոչ միայն վաճառքի, այլև օտարման այլ դեպքերում նույնպես պետք է գործի այդ ընկերության՝ այլ բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը:

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

А. А. Осикян, А. Х. Маркосян, Т. Т. Мукучян, С. О. Токмаджян

О некоторых вопросах отчуждения акций в закрытых акционерных обществах

Исследуется один из принципиальных вопросов корпоративного управления - отчуждение акций закрытого акционерного общества. С этой целью изучены законодательные акты ряда стран, относящиеся к данной проблеме.

В статье 109-й Гражданского кодекса РА и статье 8-й закона РА “Об акционерных обществах” необходимо закрепить, что акционер закрытого акционерного общества может оформить дарственную или иным безвозмездным способом отчуждать свои акции только с согласия всех акционеров данного АО. Что касается других способов отчуждения акций закрытого АО, то здесь необходимо законодательно установить ограничения, которые исключат любую сделку по продаже акций без предварительного согласования с акционерами, имеющими приоритет их приобретения. В то же время вся система корпоративных взаимоотношений основана на правах собственности по отношению к акциям, и право их передачи наследникам или правопреемникам не может быть ограничено уставом общества, а также не зависит от других членов общества. Статья 109 Гражданского кодекса РА закрепляет данное право.

Управление акциями, права собственности по отношению к акциям, ограничения этих прав, защита приоритета по отношению к отчуждаемым акциям - все это предпосылки эффективной деятельности закрытого акционерного общества. Недостатки действующего законодательства создают условия для невыполнения, обхождения названных принципов. Авторы предлагают ряд изменений и дополнений к Гражданскому кодексу РА и закону об акционерных обществах, суть которых сводится к тому, что не только в процессе продажи, но и в ходе отчуждения акций иными способами акционеры АО должны иметь первичное право на приобретение акций.

A. H. Osikyan, A. Kh. Markosyan, T. T. Mukuchyan, S. H. Tockmajyan

Couple of Issues on Alienation in Closed Joint Stock Companies

One of the principal issues in corporate management, i.e. alienation of the stocks in closed joint stock companies is discussed in paper. Relevant legal and normative documents for a number of countries were studied with this purpose.

Authors suggest a number of amendments and additions to the Civil Law of the Republic of Armenia and to the Law on joint stock companies.

Գրականություն

1. *Թորմազյան Հ.* Պատկալի գաղափարախոսությունը, Երևան, ԱԻՄ հրատ., 2003, 24 էջ:
2. *Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ.* Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2003, 413 էջ:
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 28.07.1998, ՀՕ-239:
4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, Երևան, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N34 (166), 06.11.2001, ՀՕ-232:
5. Law on Corporations, Czechoslovakia, Prague Hospodarske Noviny, 4 May 1990, p. 1-15.
6. Law on Joint Stock Companies, Republic of Latvia, 01.12.1990.
7. Федеральный закон РФ N208 - ФЗ “Об акционерных обществах”. М. ПЮС “Кодекс”. Проспект. 2004. 72 с.
8. *Ткаченко Е.И.* Комментарий к федеральному закону “Об акционерных обществах” с постатейными материалами, судебной практикой, образцами документов. М. Бератор-Пресс. 2003. 896 с.
9. *Осиновский А.Д.* Акционер против акционерного общества. СПб. ДНК. 2004. 382 с.